ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«18» օգոստոսի 2020թ.

ՀՀ Լոռու
մարզպետարան
մարզպետ Ա.Ղուկասյանին

N242

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Շենավան համայնքի ավագանու թիվ 39-Ա և թիվ 40-Ա որոշումները:

Առդիր՝3/երեք/թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավանի համայնքապետարան, գ.Շենավան
հեռ. 077-57-07-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N39-Ա

2020 թվական 18 օգոստոսի

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18 -Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Շենավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Շենավան համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 18-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1.Շենավան համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասի և վրան գտնվող շինության նկատմամբ համայնքային սեփականության իրավունքը ճանաչելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մովսիսյան Գագիկ			
Կարապետյան Ստյոպա			
Միրզոյան Հրայր			
Կարապետյան Պարույր			

Համայնքի ղեկավար Ա.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավան համայնք, հասցե գ.Շենավան

հեռ՝. /077/57-07-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» օգոստոսի 2020թվական, 40 -Ա

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՎՐԱՆ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 78-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թվականի, թիվ 186-Ն հրամանով՝Շենավան համայնքի ավագանին

Որոշում է

1.Հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, որ Շենավան համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-086-0003-0023 ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նշանակության 0.03744 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և վրան գտնվող 90,19 քմ բնակելի տան նկատմամբ, չունենք որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն ՀՀ կառավարության 09.06.2005թ Թիվ 838-Ն որոշմամբ փոխանցված չէ համայնքին, հողամասը և վրան գտնվող շինությունը համայնքային սեփականության փոխարեն հաշվառվել է անհայտ և որևէ անձի նկատմամբ գույքային իրավունքի գրանցում չի իրականացված, հողամասը՝վրան գտնվող շինությունը տնօրինում, տիրապետում և օգտագործում է համայնքը, նշված հողամասի և շինության նկատմամբ ճանաչել Շենավան համայնքի սեփականության իրավունքը:

2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում,հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

3. Շենավան համայնքի ղեկավար Մ.Միսիթարյանին՝ դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում 06-086-0003-0023 ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի 0,03744 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և վրան գտնվող 90,19 քմ բնակելի տան նկատմամբ Շենավան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի գրանցման վկայական տրամադրելու համար:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ս.Կարապետյան			
Հ.Միրզոյան			
Գ.Մովսիսյան			
Պ.Կարապետյան			

Շենավան համայնքի ղեկավար՝ Ս.Մխիթարյան